ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբեր, 2024 թվականի N 43-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2024 թվականի դեկտեմբերի 27-ին՝ ժամը 13:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի տեսալսողական ծրագրերի թիվը և տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը սահմանելու մասին հարցը:
2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները հաստատելու մասին հարցը:
3. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Առաջին ծրագիր» լսողական ծրագրի՝ 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
4. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո») լսողական ծրագրի՝ 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:

5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Արեվիկ» («Երրորդ ծրագիր») լսողական ծրագրի՝ 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
6. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Հանրային ռադիո էյէմ» («Չորրորդ ծրագիր») լսողական ծրագրի՝ 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
7. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Հոգևոր-մշակութային» լսողական ծրագրի՝ 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
8. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Մշակույթ» (առցանց) լսողական ծրագրի՝ 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
9. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում օտարալեզու լսողական ծրագրի՝ 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
10. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի եվ դրամական հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին հարցը:
11. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

24 դեկտեմբեր, 2024 թվական
ք. Երևան